

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

Աղքատին, երբ ուզենք օգտակար ըլլալ անմիջապէս մեր որոշումը կ'ըլլայ նիւթապէս օգնել, սակայն Մանդակունի հայրապետը մեզի կը սորվեցնէ նաեւ մխիթարել աղքատին

**ՆԱՄԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ**


**ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Արդ դուն, որ չֆաւոր ես եւ աղքատ, ի՞նչու Աստուծոյ մասին անդադար բաներ կ'ըսես: Աստուած իրեն պատկանող որեւէ բանէ զրկե՞ց քեզ: Եղբայրներու նման հարուստին եւ աղքատին հաւասարապէս չբաժնե՞ց նոյն աչքերը, նոյն ձեռքերը եւ նոյն ոտքերը: Հաւասարապէս կը վայելենք արեւը, օդը եւ անձրեւը: Բոլորս ալ յառաջ եկած ենք հողէն եւ Ադամէն: Բոլորին համար կայ միայն մէկ մկրտութիւն, մէկ շնորհիք, մէկ մարմին ու արիւն Քրիստոսի: Բոլորիս համար կայ մէկ երկիր, մէկ երկիրնք եւ մէկ տիեզերական նիւթ: Ահաւասիկ ստոյգ եմ Աստուծոյ բարիքները, որ Ան հաւասարապէս տուաւ թէ՛ աղքատին եւ թէ՛ գորտերին: Ուրեմն ի՞նչ բանէ զրկեց քեզ եւ կողմակալութիւն ըրաւ ի նպաստ հարուստներու: Գիտեմ, որ այս մասին ոչինչ ունիս ըսելիք, այսուհանդերձ կ'ըսես. «Ո՛րքիւ անոր այսքան հարստութիւն»: Լաւ հասկցիր, Աստուած չէ, որ իրեն բերաւ, ցոյց տուաւ կամ շնորհեց այդ հարստութիւնը եւ քեզ զրկեց: Ոմանց հարստութիւնը գոյացաւ ագահութեամբ, ոմանցը՝ յարատեւ աշխատանքով, իսկ այլոցը՝ հօրեմական ժառանգութեամբ:

*(Ճաներ՝ Յովհան Մանդակունի)*

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ԳԻՆԻ**



Գինին Ի՞նչ բաներու կը գործածուի նաեւ:

Նախքան խօսիլը գինիի գործածութեան այստեղ նշենք, թէ եկեղեցոյ կանոնականացած օրէնքներէն մին է, որեւէ սրբազան անօթ, ըլլան անոնք խաչ, պատկեր, Պատարագի Մեղան, թէ Սկրտութեան Ս. Աւագան, Ս. Միւռնով օծելէ առաջ, կը սրբեն ու կը մաքրեն նախ ջուրով եւ ապա գինիով:

Գինին եկեղեցիէն ներս կը գործածուի, նաեւ Պսակի Ս. Խորհուրդի ասարտին, երբ պսակադիր քահանան օրհնելէ ետք զայն, կը հրամցնէ պսակուող գոյգին, խաչեղբօր եւ հարսնաքրոջ, որպէս յիշատակում Կանայի հարսանիքին:

**ԱՌԱԿՆԵՐ**

Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ Գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշտ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար (Բ. Տիմ 3.16):

**ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ**  
**ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Բենյ. Սարգիսեան**



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ**



ԲՈՒ ԽՕՍԲԻ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸՄԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 16 ՅՈՒՆԻՍ 2023** ԹԻՒ 29

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

Իմաստ. 7.25-8.4: Չք. 14.16-21: Ա. Յհ. 1.1-7: Ստ. 16.13-17.13

**ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹՆՈՍԻ 16.24 - 17.13**

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ, թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով, որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն եւ ով, որ ինձի համար կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ որեւէ բանով չի կրնար իր կեանքը ետ առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց: Իր դէմքը արեւու նման լուսատու դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան: Եւ ահա երեւցաւ Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ:

Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսատու ամպ մը ծածկեց զիրենք եւ ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի Որդիս, որ հաւնեցայ: Անոր մտիկ ըրէ՛ք»: Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի ելէ՛ք, մի՛ վախճաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ զատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ըսելով. «Մինչեւ, որ մարդու Որդին մեռնէրէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ռեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչո՞ր Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ»:

Յիսուս պատասխանեց. «Ճիշդ է, Եղիան նախ գալով, պիտի պատրաստէ ամէն ինչ, բայց զիցեք, որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս, որ ուզեցին: Նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն աշակերտները հասկցան, թէ Յովհաննէս Սկրտիչի մասին կը խօսէր ան ամենուրեք, այսինքն՝ ամէն տեղ:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառը ժողովրդական այն անունն է, որ կը տրուի Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ գլխաւոր տօներէն «Այլակերպութիւն» կոչուող տաղաւարին: Այս նոյն տօնին կը վերագրուի նաեւ երրորդ կոչում մը, որն է «Պայծառակերպութիւն»:

Պայծառակերպութեան տօնը, ամէն Տէրունական տօներու նման, կը վերաբերի Յիսուսի կեանքէն յատուկ դրրազի մը՝ Անոր փառաւոր ու լուսաւոր կերպով երեւնալուն երեք առաքելներուն՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի, Գալիլիոյ սուրբ լերան վրայ: Ահա թէ ինչ ձեւով կը ներկայացուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան դրուագը Մատթէոսի աւետարանին մէջ.

«Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց: Իր դէմքը արեւունման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ներմակ եղան:

Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

– Տէ՛ր, ի՛նչ լաւ է հոս, եթէ կ’ուզես, երեք վրաններ շինեմք, մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ միւսը՝ Եղիային համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք: Ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ’ըսէր.

– Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հանեցայ: Անոր մօտիկ ըրէ՛ք» (Մտ. 17.1-6):

Վարդավառի կամ Այլակերպութեան տօնին վերաբերող ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող աւանդութիւնն է ջրախաղեր կատարելու աւանդութիւնը:

Կ’ըսուի, թէ Վարդավառի տօնակատարութեան ընթացքին մանուկներ, ծերեր, այրեր ու կիներ տուններու մէջ, փողոցները, դաշտերը, գետերու ափին, աղբիւրներուն եւ առուներուն մօտ կուծերով իրարու վրայ ջուր կը թափեն եւ զիրար ջուրերուն մէջ կը մխրճեն: Այս աւանդութիւնը Նոյի ժամանակներէն մնացած է Հայաստան աշխարհի մէջ:

*Աւանդապատում*

### ՀՎԻՅՈՒՄ ՊԱՏՄԱՍԵՆ ԲԼՈՒՆ

#### ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ Է ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

Քրիստոնէաներուն պարտականութիւնը պիտի ըլլայ չտարուիլ աշխարհային չարիքներու հոսանքին: Մեծ եւ լուրջ պահանջք է ասիկա եւ արդէն ասոր մէջ է քրիստոնէայ մարդու քաջութիւնը կամ առաքինութիւնը: Եթէ աշխարհը մութ է, քրիստոնէան պէտք է լուսաւորէ զայն ճրագի մը նման, եթէ աշխարհը անհամ է, քրիստոնէան է՝ որ պիտի համեմէ զայն աղի պէս: Այսպէս պատուիրեց Տէրը իր աշակերտներուն եւ բոլոր իրեն հետետրոյններուն (Մատթ. 5.13-16):

Վերջապէս քրիստոնէաներ այնպէս ապրելու են իրենց հաւատքին կեանքը, որ քրիստոնէական վարդապետութիւնը փառաւորուի:

(Տիմոս 2.10)

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

### ԸՆԴՈՒՆԻՒԼ ՄԵՐ ԱՆՁԵՐԸ

Ընդունելու համար Աստուծոյ փրկարար շնորհքը՝ պէտք է ընդունիլ մեր անձերը իրենց բոլոր թերութիւններով եւ տկարութիւններով: Երբեմն կը դժուարանանք եւ չենք ուզեր հաւատալ, որ այս ինչ կամ այն ինչ տրկարութիւնը գերի բռնած է մեզ: Բայց պէտք է ըլլալ մեր անձերը: Պէտք է ընդունիլ մեր անձերը այնպէս ինչպէս որ են: Երբ ընդունինք մենք զմեզ, ընդունինք մեր տկարութիւնները, այն ատեն է, որ Աստուծոյ Հոգին կը սկսի գործել մեր մէջ: Շատ դժուար է ընդունիլ մեր անձերը: Այնքան դժուար, որքան դժուար է ստիպել ուրիշը, որ ինքզինք ընդունի: Ինքզինք ընդունող մարդը, Աստուծոյ Հոգիին բերած խաղաղութիւնը ընդունած կ’ըլլայ, իսկ Աստուծոյ Հոգին ընդունողը՝ կարող կը դառնայ ուրիշներն ալ ընդունելու:

#### ԱՌԱՎ 4

Որդեան՛կ, լսէ՛ խօսքերս եւ գործադրէ՛ զանոնք, այն ատեն պիտի երկարին ու առատանան կեանքիդ տարիները: Ես՝ իմաստութեան սկզբունքները կը սորվեցնեմ քեզի, կը ծանօթացնեմ ուղիդ ճամբաները, որպէսզի քալած ատենդ խոջընդոտի չհանդիպիս եւ վազած ատենդ յոգնութիւն չզգաս: Ամբողջ պահէ խրատս եւ մի՛ ձգեր. պահէ զայն, որովհետեւ ան քու կեանքդ իսկ է: Ամբարիշտներու ճամբէն մի՛ քալեր եւ մի՛ նախանձիր անօրէններու ընթացքին:

## ԵՌՔ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

### ԵՌՔ ԱՆԻՐԱՌՈՒՄ ԵՍ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՓԵՏՈՒՄ, ԿԱՐԿԱ՝ ՍԱՂՍՈՍ 55

Ականջ տուր աղօթքիս, ո՛վ Աստուած խնդրանքներս մի՛ անտեսեր: Նայէ՛ ինձի եւ պատասխան տուր: Հոգիս տրտում կ’ալեկոծի եւ խռովքի կը մատնուիմ՝ թշնամիին սպառնալիքներէն եւ ամբարիշտներու տուած նեղութիւններէն, որովհետեւ անիրաւութիւն կը թափեն զլիսուս, եւ բարկութեամբ ոյս կի պահեն ինձի դէմ: Միրտս տագնապի մէջ է, մահուան սարսափը պատեր է զիս: Ահ ու դողը բռնէր է զիս եւ սոսկումը զիս համակեր: Երանի, թէ աղանիի պէս թեւ ունենայի, հեռու թռչէի, հանգիստ գտնէի: Այո՛, հեռու՝ հեռու՝ փախչէի, անապատի մէջ բնակէի: Շուտով ինձի ապաստան գտնէի սաստիկ հովէն ու փոթորիկէն:

Խառնէ՛, ո՛վ տէր, բաժնէ անոնց լեզուները, որովհետեւ քաղաքին մէջ միայն վայրագութիւն եւ հակառակութիւն կը տեսնեմ, որոնք անոր պարիսպներուն վրայ կը շրջին օր ու գիշեր, եւ զայն կը լեցնեն յանցագործութեամբ ու դժբախտութեամբ, զայն կը լեցնեն աներածութեամբ:

Շարունակել ընթերցանութիւնը ՍԱՂՍՈՍԱԳԻՐՔԷՆ:

Միշտ Սաղմոս կարդանք եւ աղօթենք: